

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51-րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 12

Գ. ՇՐՋԱՆ

23 ՄԱՐՏ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար Գառնունդը եւ գաւառներուն համար Յիսուսնդը. կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ կամ 5 ռուբլի: Թղթատարական ծախիսը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ըլլի ամէն շաբաթ առօրէ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աչյա տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیّه آغوب مطبوسیان مطبعه سنه « ماسیس » غرضی اداره سنه

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ (ՄԱՍԻՍ) Ի

Rédaction de la Revue MASSIS

Տպարան Յ. Մատթէոսեան

Imprimerie H. Matteosian

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

CONSTANTINOPLE

ԲԵՐԱՅԻ ԳԱՐԼԸՄԱՆ

ՎԱՃԱՌԱՏԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԼԻՔԻՏԱՍԻՈՆԸ

Ս Վ Ս Վ Ք

Երկուամսքի 11/24 Մաւրս

Ա Տ Ա Մ Ն Ա Ֆ Ո Յ Ժ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ, ՅԻԻ 200

Կալարա-Սերայի Լիսէին դէմ

ԳԵ. ԵՇ. ՇՐ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. Իիթիիշեան Վաճառման կեդրոնատեղին է Պաղատեան Գրատունը Կը գտնուի Նուստ-ամէն հայ գրավաճառներու քով:

Գին 15 դրուշ

5—10

Ի Ի Ն Ի Յ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փեսք	240,000,000 Փր.
1899ին զանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փեսք	99,000,000 Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԸ ԱՐՆԵՆԸՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՐԻՐԾ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որեւէ ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ժամաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 23 ՄԱՐՏ 1902 —

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գեղարուեստի բաժինը. Ս. ԱՆԳՆԵՎԵԱՅ. — Ժամն Հասինկ եւ իր հինգ ներկայացումները. Գ. Մ. ՅԱԿՈԲՅԱՆ. — «Փոխան ծաղկեփունջի» (Նորավայ). Գ. Ա. ՆԻԿ. — Կառապին երգը (Բանաստեղծութիւն). Մ. ՈՒՂՈՒԲԻՆԵԱՆ. — Թատերական գործը Կովկասի մէջ. Մ. Պ. — Պրուսայի առաջնորդը :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԲԱԺԻՆԸ

Օ. Զիֆթէ-Սարաֆ կը գտնուէր անցեալ օր⁽¹⁾ թէ մեր լրագրութեան մէջ անտեսուած ճիւղ մը եղած է գեղարուեստականը : Այս ղեկավարութիւնը իր բոլոր պարզութեանը մէջ հայցակէտի սխալով մը երեւան հանուած էր, վասն զի պատճառը չէ որ կը փնտռուէր՝ այլ արդիւնքն էր որ կ'այսպէս տեսնուէր : Մինչդեռ արդիւնքին եւ պատճառին յարաբերական վերլուծումը տարբեր եզրակացութեան մը պիտի բերէր յարգելի յօդուածագիրը : Նախ, առանց երկրայեւու եւ որեւէ տարակոյս չի ձգելու համար, ըսեմ թէ ի բնէ գեղարուեստաւոր մը եղած եմ, եւ անով ալ հետաքրքրուող մը, միշտ սա համոզումը կրելով իմ ներսս թէ գեղեցիկին ըմբռնման զարգացումը ժողովուրդի մը չէ թէ միայն մատուցական մակարդակին՝ այլ նաեւ զգայնութեանը եւ սիրտին զարգացմանը ամենամեծ օժանդակ մըն է : Բայց այս գեղապաշտ յայտարարութիւնս միանգամայն արգելք չպիտի ըլլայ որ բացարձակ կերպով յայտնեմ թէ ասով հանդերձ մեր լրագրութեան մէջ «գեղարուեստի բաժին»-ի մը կատարեալ բացակայութիւնը մասամբ արդարաւորապէս մէջ կը գտնուիմ : Կարգ մը պատճառներով դուրս պիտի պարգեմ : Լրագրութեան մէջ ճիւղ մը մշակելու

համար պէտք է որ նախ այդ սեռը ժողովուրդին մասշտիբ ըլլայ եւ հետեւաբար, անոր գոյութիւնը պահանջուի : Դժբաղդաբար դեղարուեստական բաժինի մը համար այդ խնդրանքը մեր մէջ գոյութիւն չունի : Ծիչդ հակադարձաբար մեր լրագրութեան մէջ ամենէն շատ սիւնակ զբաղող քաղաքականի բաժինը — բան մը որմէ կը գտնուի Զիֆթէ-Սարաֆ — լոկ կամահաճութիւն մըն է ընթերցողներուն փափաքներուն հանդէպ զոր կարգ մը խմբագիրներ ի գործ կը դնեն, յաջողելու համար այն միջոցներն եւ պայքարին մէջ զոր միշտ մղելու ստիպուած են իրարու դէմ, հարկադրուած զգալով ինքզինքնին՝ առանց գաղափարական հիմի՝ առատութեամբ տալու քաղաքական տեսութիւններ, լուրեր եւ չեմ գիտեր ինչեւր : Հետեւաբար, խնդրանքին դէմ մատուցում մըն է քաղաքական բաժինին այդ անսովոր առատութիւնը՝ ինքնին տարօրինակ կերպով անիմաստ ըլլալով հանդերձ : Ողորմելի ճաշակ մը վերջապէս որ եկած հաստատուած է մեր ժողովուրդին մէջ եւ ուր՝ նոյն խիստ եկած տեղաւորուած է սա աղէտ կարծիքը թէ ամենէն գիտունները անոնք են որ քաղաքականութեան վրայ ճառել գիտեն : Այս համոզումին պատճառն է մեր ժողովուրդին ի սկզբանէ անտարբերութեամբ, արուեստագէտ ու կեանք

(1) Մասիս Թիւ 10.

քէն համ առնող ժողովուրդ մը չըլլալը : Զուարճասէր ժողովուրդ մըն ալ չենք եղած : Խաղը , պարը եւ նոյն իսկ կինը տիրացուաբար անարգուած են մեր մէջ եւ ասով կիներու մէջ բանբասանքին եւ այրերուն մէջ կրօնական-եկեղեցական եւ թաղային խնդիրներու հետ՝ մեր լրագրաց «քաղաքական» ու վըն ալ զբաղելու միտումն մը ծնունդ տրուած եւ սովորական դարձած է : Այս շնորհակար հակումը որ լրագրական խնամակալ ուղղութեամբ մը կրնար բարեշնչուիլ , ընդհակառակը աւելի շատ մշակուեցաւ , քաղաքական լուրերը եւ տեսութիւնները այնպէսի ոճով մը խմբագրուելով որով կը դատեն սովորաբար սրճարանի մը անկիւնը նստող քանի մը անձեր՝ ժամանակ սպաննելու համար : Ժողովուրդին ռամիկ մասը չարունակ ձգտում ունի ամէն բան չափազանցելու , եւ այս հակումը դժբաղդարար կը մշակուի մեր խմբագիրներէն որոնք քաղաքական գրած ըլլալու համար երբեմն կանխադուշակը կ'ըլլան կարգ մը իրողութեանց որոնք ո՛չ տեղի կ'ունենան եւ ո՛չ ալ կրնան տեղի ունենալ :

Խնդիր է թէ գեղարուեստական բաժինի մըն ալ նոյն ոգեւորութեամբ պիտի հետեւէր : Մեր համայնքին մէջ գեղարուեստին դասը ընդունելութիւնը եւ անոր առաջընթացութիւնը ցոյց տալ կարծեմ բաւական պիտի ըլլայ համոզելու՝ մեր լրագիրներէն գեղարուեստական բաժին մը պահանջողները , որ իրենց այդ տրդար պահանջը գործադրելի ըլլալու համար դեռ ժամանակի կը կարօտի :

Նախ պէտք է ըսել թէ փոքր Ասիոյ բնոր բնակիչները — ընդ որս եւ մենք — գեղարուեստասէր չեն եղած ընդհանրապէս :

Մասնաւորապէս ձեւակերպական (plastique) արուեստները անմշակ մնացին Փոքր Ասիոյ ինչպէս նաեւ մերձակայ ներքնաշխարհին բնակիչներուն , Հրեաներէն սկսելով մինչեւ Ասորիներուն եւ հին կարգ մը ժողովուրդներուն որոնք այսօր ընդհանուր առմամբ Գարամանցի (Փոքր Ասիացի Յոյնի հնուն միւթանացի , Պապլակոնիացի , Կապադովկացի եւայլն) անունով ծանօթ են : Հայերը՝ անկեղծ ըլլալու համար՝ պէտք է ըսել թէ այս ժողովուրդներուն մէջ ամէնէն

աւելի Հրեաներուն նմանած են , կարելի եղածին չափ դրամատէր եւ՝ գործնական ձգտումներով օժտուած ըլլալով : Սեղանաւորութիւնը և վաճառականութիւնը նախասիրուած արհեստներ եղած են որով թէեւ հարստացած են , բայց մրցակիցներ չյարուցանելու եւ աննշմար նալու համար ստիպուած են անշուք կեանք մը անցընել : Առանց պերճանքի եւ քիչ չափութեան՝ գեղարուեստ մշակել կարելի է , եւ այդ պերճանքն ու չափութենէ զուտ շանալու արամադրութիւնը պատճառ մըն որ մարդ իր շատ զբաղեալ , միշտ գրաւուած եւ գրեթէ տարտնած մտքովը մահացուցալ ըլլայ իր մէջը գեղեցիկին ձգտումը՝ որ քաղական ըլլալու չափ նախնական է թերեւ մարդուս մէջ . բայց ասով հանդերձ կրնա իրողութիւն՝ երբ մարդ զայն ուշադրութեամբ անելու ժամանակ եւ միջոց չունենայ :

Մտքի մեծ աշխատասիրներ երբ իրենց կեանքը չարաչար աշխատութեամբ անցուցանեն , երբեք չեն անդրադարձած ընտանիքներու ամէնէն զօրաւորին եւ միանգամայն ամէնէն մարդկայինին՝ սեռական բնազդին վրայ : Ինչ որ անհասանելու համար ճշմարիտ է համայնքներու համար ալ ստոյգ է եւ նաեւ տեւաբար ճշմարիտ է թէ մենք գեղարուեստասէր չըլլալէ զատ գեղարուեստով ալ չենք զբաղած եւ հետեւաբար այսօր երբ մեր լրագրութիւնը այն ճիւղը մշակէ՝ ժողովուրդը չպիտի շահագրգռուի , միայն լրագիրն է որ օգտակար ճիւղ մը մշակելու ձգտումը ունեցած պիտի ըլլայ :

Հոս ալ ուրիշ խնդիր մը կը ծագի , զոր աննշմար չպիտի անցնինք , Կարելի՞ է մեր լրագրական հրապարակէն այդպիսի փորձ մը կրնալու : Ահա հարցումը որուն պատասխանը ալ դժբաղդարար ժխտական պիտի ըլլայ , Կարելի՞ է անորինակ մրցումի մը մէջ է այսօր մեր լրագրութիւնը , ուր քիչ ընթերցող ունեցողութիւնը ստիպուած են շատ ընթերցող ունեցողներուն հետ մրցիլ՝ վերջիններուն մշակութաւորութեան աւելի կառարկաները տալով եւ ծաւալած թերթերն ալ ստիպուած են աւելի խնամք տանիլ իրենց բովանդակութեանը , ուղղութեամբ իրենց գրաւած ընթերցողները միւսներու մրցումովը չկորսնցնելու համար :

տական ու բարեգործական հանդէսը մեր բարքերուն մէջ մտած է այլեւս, եւ հանրութեան ճաշակին վրայ ազդած: Կարգադիր մասնախումբը գոհացուցիչ հասոյթ մը ձեռք բերելու համար ջանք չի խնայելով հանդերձ՝ մասնաւոր խնամք տարած է նաեւ այս երաժշտական ցերեկոյթին յայտագիրը ճոխ ու հրապուրիչ ընծայելու: Յաջողութեան ամէն պայմաններով օժտուած, վաղուան Նուագահանդէսը կը խոստանայ իր նախորդներուն չափ փայլուն ու արդիւնաւոր ըլլալ:

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՊՐՈՒՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՆԿԱՏԱՄԲ

Նստն ժողովը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առնելով Պրուսայի առաջնորդին հրաժարականը, անընդունելի դատեց զայն: Արդէն, ասկէ տարբեր որոշում մը չէինք սպասեր Ազգ. Վարչութիւնէն, թէ եւ Սուրհանդակ՝ Արշարունի եպիսկոպոսին նուիրած իր պաշտպանողականին մէջ կը գրէր թէ «Այս եպիսկոպոսութեան աստիճանը արտօնող Վարչութիւնը խօսքի խառնուած չունի»: Կը տեսնենք ահա թէ, երբոր կարող եկաւ խօսքի խառնուեցաւ եւ շատ բանաւոր կերպով, Պիտի ուղէինք չիտակը — եւ թերեւս սպասողներ ալ գտնուին մեր ընթերցողներուն մէջ — զբաղիլ քիչ մը այդ «պաշտպանողական»ով որ ի նպաստ Արշարունի եպիսկոպոսին սա պարագան միայն երեւան կը հանէ, թէ մատնիակորոյս Սրբազանը Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Հայոց հոգեւոր հովուութեան պաշտօնին թեկնածու է եղեր. . . նստուկ կեանքը իր առողջութեանը չի յարմարելուն համար: Բայց ինչպէ՞ս վիճաբանիլ պաշտօնակցի մը հետ որ առաջնորդական հրաժարականի մը խնդրոյն վրայ գրած աւանդ, սիրային ոճիւրի մը զոհ գացող էօթէնին մէջ կը խառնէ: Զի հասկցանք թէ այս «լպիրչ կնոջ» — Սուրհանդակի պարկեշտաւուն խմբագրութեան բառերովը — եւ Մաւիսի յուզած ներկայ խնդրոյն մէջ ի՞նչ առնչութիւն կրնայ գտնուիլ: Այս տեսակ խուսափողական եւ ծուռ ձեւերը չեն յարմարիր մեր

ո՛չ ճաշակին ու ո՛չ ալ վիճաբանելու ձեւին: Վարչութիւնը, իր ինքնաբեր որոշումովը իրաւունք տուաւ արդէն անոնց որոնք անտեղի ու անարդարանալի կը գտնէին Արշարունի եպիսկոպոսին հրաժարականը: Պրուսայի առաջնորդը կրնայ, այդ որոշման հակառակ, Պուլիս գալ. ասիկայ՝ իր եւ Պաւլիարքարանին գիտնալիք բանն է: Լրացուցութեան դերը, այս տեսակ պարագաներու մէջ կարծիք մը յայտնելէն անդին չի կրնար անցնիլ:

ԺԱՆ ՀԱՏԻՆԿ

Մինչ Կ. Պոլսոյ ամբողջ օտար մամուլը զբաղեցաւ Ֆրանսայի է՛ն հռչակաւոր դերասանուհիներէն Ժան Հատինիի, նախորդ շաբթու հոս տուած հինգ ներկայացումներով մեր օրաթերթերը կարծես մասնաւոր բաժնիքով մը — ինչպէս արդէն դիտել տրուած Մաւիսի «Գեղարուեստի բաժինը» յօդուածով — տող մը իսկ չնուիրեցին այդ տաղանդաւոր կնոջ:

Եւ զարմանալին այն է որ, հինգ ներկայացումներուն ալ — այն երեքէն միայն գտնելով որոնց կրցայ ներկայ գտնուիլ — այս հին գոնէ քառորդը Հայերը դրաւած էին որով քանի մը յօդուածներ այդ ներկայացումներուն վրայ՝ չահեկանութենէ զուրկ ու չըլլային, մեր զարգացեալ դասակարգին համար:

Բայց քանի որ ոչ մէկը գրեց Ժան Հատինիի վրայ եւ քանի որ Մաւիս իբր գրական շարժաթիւթէն աւելի կը զրապի օտար գեղարուեստով ու գրականութեամբ, պէտք է որ ան գոնէ նուիրէ յօդուած մը Ֆրանսայի թատերաբեմին պարծանքներէն մէկը եղող այդ կնոջ, իբր յիշատակ մը իր այցելութեան ի Կ. Պոլիս:

* * *

Ռէժիսոր մեր վրայ թողած տպաւորութիւնը դեռ այնքան թարմ է, որ մեր գրական հակումով մը բաղադատութիւն ընելու կը ստիպուինք խոյն ֆրանսաւոր թատերագրութեան այդ երկու ակոյցաներուն:

միջեւ, զորս իրարու ետեւէ ծափահարել կա-
րենալու առիթը, ճշմարիտ բաղդ մը կրնայ
սեպուիլ, Պոլսոյ հասարակութեան համար :

Եթէ Ռէժանն ու Հատինկը միեւնոյն դե-
րբուն մէջ տեսնելու առիթը ունենայինք,
տարբերութիւնը շատ աւելի՝ աչքի դարձող
պիտի ըլլար, ու աւելի դուրաւ պիտի կա-
րենայինք ընել բաղդատութիւն մը, որ միշտ
Ռէժանի ի նպաստ պիտի ըլլար, կարծեմ :
Եթէ Հատինկ ալ գիտէ, Ռէժանի չափ եւ
երբեմն իսկ անկէ՝ աւելի աղէկ, իրական-
ութեան ճշմարիտ պատրանքը տալ՝ բուն
կիրքերու արտայայտութեանց մէջ, սակայն
Ռէժանի խաղը առ հասարակ չափ աւելի
իրական է քան Հատինկինը. զի, պարզ տե-
սարաններու մէջ, կը դիտես առաջինը՝ իբր
գերազանցապէս կարող դերասանուհի մը եւ
կը սքանչանաս անոր վրայ, մինչ երկրորդին
մէջ կը տեսնես միայն կինը եւ կը հիանաս
անոր գեղեցկութեանը վրայ : Եւ տարակոյս
չկայ թէ Ռէժանը, եթէ ունենար այն նուրբ
ու ձկուն հասակը, այն հեշտաբոյր բերանը,
այն խօսուն աչքերը, այն ներդաշնակ ձայնը,
վերապէս ֆիզիքական այն ամէն առաւելու-
թիւնները՝ զորս Հատինկ, հակառակ իր
քառասուններէ տարիներուն, կը վայելէ դեռ
մինչեւ ցարդ, շատ աւելի պիտի հրապուրէր
հանդիսատեսը քան թէ Հատինկը : Ռէժանը
նախամեծար համարելով չեմ ուզեր նսեմա-
ցունել Հատինկի արժանիքը, որուն Ռէժանի
հետ բաղդատուիլ կարենալն իսկ, իր ար-
ուեստին կատարելութեան մէկ ապացոյցն է,
քանի որ Ռէժան, ինչպէս ինքը ըսած է,
մեծ վառք մը կը համարի եղեր իրեն, ան-
զուգական Սարային հետ բաղդատուիլ :

Ուստի պահելով ֆրանսական բեմին այդ
չքնաղ ողբերգուհիներու երկուսի բոլին դա-
սակարգութիւնը, Սարան, Ռէժանն ու Հա-
տինկը, ուսումնասիրենք քիչ մը այս վեր-
ջինն անձնայատուկ ձիրքերն ու թերու-
թիւնները :

Հատինկ, այս երեքէն, la grande amou-
reuseն է գերազանցապէս եւ խաղը որչափ
աւելի յուզել ըլլայ, որչափ աւելի սրտայոյզ
տեսարաններ ունենայ, բեմի վրայ Հատինկի

մղելիք սիրոյ պայքարը սրքան աւելի բուն
ըլլայ, այնքան աւելի մեծ կ'ըլլայ իր տարած
յալթանակը : Ձի, ինչպէս քիչ մը առաջ ըսի
արդէն, կեանքի սովորական, խաղաղիկ ըն-
թացքը պատկերացնող տեսարաններու մէջ,
Հատինկ ունի սեթեւեթեւ ձեւ մը, որ իր
կանացի սլշրասիրութեան, Ֆրանսայի է՛ն
հրապուրիչ կիներէն մէկը եւ գլխու բռնու-
ածքի կերպին մէջ անզուգական ըլլալու իր
տիեզերահզակ համբաւին պէտք է վերա-
գրենք մասամբ : Բայց երբ կուգայ այն վայր-
կեանը ուր պիտի յայտնէ իր բուն սէրը,
պիտի լուծէ իր վրէժը, լուտանք ու անէծք
պիտի տեղացնէ իր սոսիւն գլխուն, պիտի
մերժէ իր անհաւատարիմ սիրահարը, պիտի
վանէ իր կեղծաւոր տարփածուն, ոտքը պի-
տի իյնայ իր էրկանը որմէ ներում պիտի
խնդրէ՝ եւ կամ վիզը պիտի պլլուի անոր որուն
դէմ անիրաւ քանուած է, անա տեսարան-
ներ, հանդիսատեսին համար անմոռաց տե-
սարաններ, ուր Հատինկ կելլայ ինքզինքէն,
կը մոռնայ ամէն բան ու միմիայն կրել ձե-
ւացուցած կիրքերուն անձնատուր, զորս
իսկապէս կը կրէ արդէն կարծես, կը խոյա-
նայ իր արտայայտած յուզմանց մէջ, ինքն
ալ կը հաւտայ ու կը հաւտացունէ, ինքն ալ
կը յուզուի ու կը յուզէ, ինքն ալ կուլայ
ու կը լացունէ :

Աչքերուն ու դէմքին արտայայտութիւնը,
ձայնին ելեւէջները, դիմագծերուն պրկումը,
մարմնին ամէն մէկ շարժումը քննելն այն-
քան լաւ ուսումնասիրուած են, դերակա-
տարն այնչափ աղէկ իր դերին մէջ է որ գի-
տէ իրականութեան անսագիւտ պատրանքը
տալ, առանց սակայն — ուրիշ շատ մը ե-
րեւելի գերասաններու նման — բնականին
սահմանէն դուրս ելլելով, չափազանցութեան
մէջ իյնալու, ինչ որ դերագոյն արժանիք
մըն է իրեն համար :

Ձկայ, կ'ըսեն, Հատինկի չափ խղճմտօրէն
իր դերը ուսումնասիրող, իրեն չափ ամենա-
չնչին մանրամասնութեանց հոգ տանող դե-
րասանուհի մը եւ ինչպէս որ Սարա Պէռ-
նար, Բարիզ հիւծախտաւորներու հիւանդա-
նոցին մէջ օրերով գացած ուսումնասիրած է
խեղճ թոքախտաւորներու հոգեվարքը, իր

«Գումէլեազարդ Տիկին»ը ստեղծելու համար, նոյնպէս Հատինը երեք ամիս շարունակ զբաղած է «Դարբնոցապետ»ի Քլէր ար Պօլիէօյի գերին էն մանրակրկիտ պարագաներովը, էն նորին մանրամասնութիւններովը, որով յաջողած է տանելու իր առաջին էն մեծ յաշվածանակը, ներկայացնելով երեք հարիւր անգամ իրարու ետեւէ այդ խաղը որ ինքնին, ո՛չ իբր ընկերական բարձրութեամբ ուսումնասիրութիւն, ո՛չ իբր լեզուի ներքութիւն կամ նիւթի նորութիւն եւ ոչ ալ իբր հոգեբանական թատերագութիւն որ եւ է գրական արժանիք չունի եւ սովորական թերթօնի պէս վէպ մըն է միայն :

Եւ Օնէ իր այդ թատերագութեան յաջողութիւնը կը պարտի մեծ մասամբ Հատինի որ գիտցած է իր անմասն արուեստովը նըւիրագործել, անմահացունել Քլէր ար Պօլիէօյի գերը :

* *

Դարբնակապետով իր համբաւը չինելէ ետքը, ա՛լ այնուհետեւ Հատինի որ անկէ առաջ, իր ընդգրկած ասպարէզին սկիզբը, բաւական դեղերած է օրէքէթէն զաւելտ, զաւելտէն ողբերգութիւն, յաջողութեանց անհատնում չարք մը ունեցած է եւ իր բոլոր ստանձնած ու երբեմն ալ ստեղծած դերերը իր տաղանդին մասնաւոր կնիքովը զբոշմած է :

Բայց իր բնաւորութեան ու խաղացուածքին էն յարմարող խաղերը եղած են Սափօն, Փրուֆրուն, Լիքրամեդը, Նօ'գ ենթիւն, Սարա կոստուհին, Տրաի Վիեթը, Լիօնեքը ու Վեթիքը որոնց զխաւոր դերերը մեծ մասամբ իրեն համար գրուած են մասնաւորապէս :

Հոս՝ մեզի ներկայացուցած հինգ խաղերը իր թատերացանկին լաւագոյններէն կրնային համարուիլ :

Առաջին իրիկունը Lionnetteին չկրցայ գտնուիլ, որով չպիտի կարենամ խօսիլ այդ երեկոյթին վրայ, բայց կ'երեւայ թէ իր հինգ ներկայացումներու շարքին մէջ, իր էն աննպաստ դերը այդ իրիկունը եղած է :

Երկրորդ ներկայացումն էր L'étrangèreը, Ալեքսանդր Տիւմա Որդիի արտաւոր սկզբ-

ութենքերու վրայ հիմնուած, մեզ ամէնու ծանօթ այն ինքնատիպ խաղը, որ իր գրութեան պատճառը կը պարտի միայն Տիւմազրիչէն ելած ու Հատինի պէս կարող դերասանուհիէ մը խաղացուած ըլլալուն : Երկրորդ, Հատինի իր արուեստին կարողութեամբ կրցու համակրելի դարձունել միայն այդ անբական խաղը, աննշմարելի ընկ տանիւթին անհեթեթ կողմերը եւ երրորդ արարուածին վերջը երբ, իր ապօրինի սէր արդարացնելու համար, իր չսիրած ամուսնոյն երեւոյն տուաւ անոր վատ, յոսի անբարոյական ընթացքը, թուելով մէկի մէկիկ այն անբեւակայելի անարգանքները միայն վատթարացումները որոնց հարկադրած էր զինքը, իրենց ամուսնութեան առաջին չէրն իսկ ուր յանձներ էին զինքը անոր, ամեղ ու անարատ, ամբողջ սրահը արբիւղ զգլխած, սքանչացաւ այդ կնոջ անմասն տաղանդին վրայ :

Դարբնոցապետին մէջ, որ ներկայացուեցաւ երրորդ իրիկունը, տեսանք Հատինի իր արուեստին կատարելութեան հասած :

Առաջին երկու տարուածներուն, որով կը վայելէ՝ այդ բնականէն արդէն վէս կնոջ Քլէրի սէգ ու հալարտ գերը, իր արհամարհոտ վարմունքը, իբր բարձր դասու աղնութեան հետ հարմարութեան հանդէպ իսկ երրորդ արարուածին սրբան լաւ տալայայտեց իր զարմանքը երբ իմացաւ հարստութիւնը կորսնցուցած էր արդէն մուսնութենէն առաջ եւ զրամօթիտ չէր բաժնիքին : որքան բնական երեւցուց իր զգացմանց յեղաշրջումը որով սկսաւ իրել պաշտել իր ամուսինը որուն արդէն ինկարագրին վրայ սկսած էր զմայլել : Եւ չորրորդին, երբ եկաւ արտաբեկ, զղջացած իր յանցանքները ճանչցած, ներում խնդրելու իր հիմայ պաշտած ամուսինէն որուն արքանիքը անդիտած էր մինչեւ ցարդ, ինկաւ անոր ծոռագերուն, աղաչեց պաղատեցաւ չեղթայ մենամարտիլ դուքսին հետ, խոստանալով անոր ա՛լ արնուհետեւ բարեբաւութիւն կրջանկաւէտ կեանք մը, չկար սրահին մէկը որ յուզուած չըլլար : Ո՛հ, պարզապէս զմայլելի էր : Անկարելի էր աւելի կատարել-

Քէլը մը երեւակայել : Եւ վերջին տեսարանին , երբ եկաւ նետուեցաւ երկու մենամարտիկներուն մէջանդ ու ինքը վիրաւորուելով ինկաւ Ֆիլիքի գիրկը , սրահը գոռաց բռնոն ծափահարութեանց տակ :

Վերջին ինքնակայացումն էր Տըմի Վիկտոր , Մարտէլ Բրէվոյի հանրածանօթ վէպին թատերագութիւնը , ուր տեսանք Հատինկը նոր երեւոյթի մը տակ :

Իր սրտի հակումներուն հակառակ ամուսնացած եւ յետոյ իր նախկին սիրոյն անձնատուր ու վերջիվերջոյ զղջացող կնոջ դերը չէր Հատինկի այս անգամուան ստանձնածը : Մարտէլ Բրէվոյ իր այդ խաղին մէջ կուզէր ցոյցնել թէ որչափ ծուռ է ճամբան սրուն մէջ կը նետուին այսօրուան աղջիկներէն շատեր , երբ կը կտրծեն թէ որչափ պշրատէր ըլլան , որչափ թեթեւօրէն ըլլան , վարմունքներն որչափ հրապուրիչ ըլլայ , որչափ շատ սիրաբանին , այնքան շուտ ու դիւրաւ կրնան ամուսին գտնել :

Եւ չեն գիտեր թէ այն այրերը որոնց երես կուտան , եւ որոնք , իրենց այս վարմունքէն օգուտ քաղելու համար միայն լոյրորտիքնին կը դառնան , բաղդախնդիրներ , սիրոյ առաքելներ են միայն որոնց միտքէն իսկ չանցնիր ամուսնանալ , մինչ անդին բարի զիտաւորութիւններով , ընտանիք կազմելու համար ամուսնանալ ուզողն ալ կը վախճայ , եթէ հաւնի իսկ իրենց , այսպէս թեթեւաբար , խօսուած աղջկան մը մօտենալու , որով բաղդի չար դիպուածով մը , դրամական անձկութիւնն ալ վրայ հասնի , եւ այդ խեղճ աղջիկները , սիրգուն սխալ քայլ մը առած արդէն , կրնան անբարոյականութեան մէջ : Մօ աը Ռուվր , զոր ներկայացուց մեզ Հատինկ , չորեքշաբթի գիշեր , այդ աղջիկներուն ախպարն է ինչպէս որ ալ Հատինկ , ախպար Մօ աը Ռուվր մըն է , Ֆիլիքական կուսութեան զատու ուրիշ արժանիք չունեցող , սիրաը , միտքը , հոգին ու մարմինը ապականուած , ամէն մօլութեան տեղեակ այդ աղջկան դերը գերազանցապէս լաւ կատարեց Հատինկ :

Եւ ինչ սքանչելի կերպով կրցաւ առնել , երբեմն անմեղ , անբասիր կոյսի մը կերպարանքը , չահելու համար այն հարուստ ու պարզամիտ գաւառացիին սիրտը , որ թէպէտ կը սիրէ զինքը՝ բայց բարոյականի վրայ շատ խիստ գաղափար մը ունի , եւ երբեմն լկտի ու իր սիրայոյզ դիպցմանց անձնատուր եղած աղջկան դերը իր տարրածուին գիրկը :

Երկրորդ արարուածին վերջի տեսարանը , ուր հակառակ իր զղացած սիրային բռնոն

առփանքին , դէմ դրաւ իր սիրահարին տենդոտ գգուանքներուն ու համոյցներուն , թէպէտ քիչ մը corsé , բայց պարզապէս զգլխիչ էր Ու վերջին արարուածին , երբ տեսաւ , աւաղ , բայց շատ ուշ , իր սիրահարին վատութիւնը եւ միւս կողմէն իր ձեռքը ուղող պատուաւոր երկտասարգին , վախցած , ետ քաշուիլը , Հատինկ անձկութեան , յուսահատութեան հրաւրանչ տեսարան մը պարզեց մեր աչքերուն առջեւ :

Հինգշաբթի , վերջին երեկոյթին , Vertigé-ին չկրցայ երթալ դժբաղդաբար : Դժբաղդաբար կրսեմ , որովհետեւ իր էն յաջող դերերէն մէկը եղած ըլլալը լսեցի ետքէն : Եւ արդէն , խաղին նիւթը գիտնալով կ'երեւակայեմ թէ ինչ հիանալի արուեստով ներկայացուցած է գրագէտի մը վիպային գաղափարներէն արքայի ու անոր սիրոյն անձնատուր եղած կնոջ դերը եւ որչափ յուզած ըլլալու է սրահը , երբ վերջը , յուսախաբ , եկած ներուստ խնդրած է իր վեհօգի ամուսնէն :

Ահա այսպէս , հինգ իրիկուն շարունակ , Ժան Հատինկ իր նուրբ տաղանդին ազդեցութեանը տակ մեզ պահելէ եւ՝ բնմին վրայ իր մզած սիրային ամէն մէկ պայքարին հոգեով ու մարմնով մեզ ալ մասնակից ընել տալէ ետեւ , մեկնեցաւ ուրբաթ առտու դէպ ի Պուքրէշ , թողլով մեր ամէնուս վրայ հեշտալի ու անմոռաց յիշատակ մը :

ԳՐ. Մ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հաճոյքով կը ծանուցանենք Ռոտով Էֆ. Սամիկեանի նշանախօսութիւնը Օր. Արաքսի Դամպէրի հետ , — քոյր Յարութիւն Էֆ. Դամպէրի , Անգաղստապահութիւն մը չէ այլեւս ըսելը թէ Ռոտով Էֆ. , մեր գրական ու լրագրական հրապարակին վրայ ճանչցուած է «Տօմինօ» ծածկանունով , որուն սրամիտ գրուածքները կը փնտռուին ու ախորժով կը կարդացուին միշտ : Օր. Արաքսի Դամպէր , որ իր անձնական շնորհին ու յատկութիւններուն կը միայնէ զարգացած միտք մը , նոյնքան ծանօթ եւ համակրելի է մեր ընտանեկան լաւագոյն շրջանակներուն մէջ , Զերմապէս կը խնդակցինք մեր բարեկամին ու աշխատակցին , եւ մեր շնորհաւորութիւնները կուղղենք երկու կողմերուն :

“ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՓՈԻՆՁԻ,”

(ՆՈՐԱՎԷՊ)

Չեմ գիտեր ինչպէ՛ս եղաւ որ սիրեցի զինքը . հիմա որ պաղ արիւնով կը մտածեմ, զբաղումի եւ զգացողութեան բնազդական պէտքերն կը վերագրեմ այս սէրը, որ լեռնական ծաղիկի մը պէս ծնաւ ու ծլեցաւ Եւրոպայի բարձունքին վրայ եւ զոր օր մը խորշակ մը չորցուց անոր սրտին մէջ, ինչպէս որ կը չորնան լեռնական բոյսերը, առանց ջերմանոցի ծաղիկներուն երկար թալկութիւնը, ամբողջ հիւժականութիւնը ճանչնալու :

Իեւ աչքս նոր բացած հիւանդութենէ մը՝ որ ակամայ ճամբորդութիւն մը ընել տալ փորձած էր ինծի — ճամբորդութիւն զոր հաստատապէս որոշած եմ կարելի եղածին չափ ուշ կատարել — դացեր ապաստաններ էի Եւրոպայի, ինքզինքս ազատելու համար ստորակէտ—մանրէներու ազդեցութենէն, այն չարածճի մանրէներուն՝ որոնք այնքան աղէկ գիտեն բժշկին օժանդակութեանը ապաւինիլ՝ իրենց ձեւը խոշոր վերջակէտի մը փոխելու համար :

Եւրոպայի շրջականերուն միակ ամառնալայրն է ուր բժիշկ ու դեղագործ դեռ չեն կրցած հաստատուիլ . . . թերեւս անոր համար որ բնութեան մրցումը շատ զօրաւոր է հոն իրենց դէմ : Այս պարագան ինքնին պիտի բաւէր նախընտրելու այս նահապետական գիւղը, եթէ նոյն իսկ չըլլար երիցս երանեալ անկուտիւթիւնով մը վարակուած ըլլալուս երկրորդ որոշիչ պարագան, որուն հանգէպ կատարեալ օրհնութիւն մըն էր պէտքերու այն նախապատմական սահմանափակութիւնը, որ անցեալի ընթացքին մէջ հարկւրաւոր տարիներ ետ կը տանի Եւրոպայի գացողը, մեր բարեյիշատակ պապերուն անպաճոյճ կեանքովը ապրելու համար :

Մաքուր օդ, անոյշ ջուր, հիանալի դաշտանկար մը . . . ահա՛ ինչ որ կարելի է լի-

ուրի վայելել Եւրոպայի մէջ . գալով Եւրոպայի, եթէ ամառուան քանի մը ամիսները մտաւաճառ մը կը հաստատուի հոն, բուսակերութիւնը (végétarisme) տիրող օրէնքէ տարւոյն մնացած մասին մէջ, մինչեւ ապահովապէս ծաւաւահիւծ մտն մը կը ապաստեն Բաբուի ջերմեռանդ երկրպագուներուն . . . եթէ իրենց խմելիքը մէկտեղ տանելու նախազգուշութիւնը չունենան :

* * *

Հանդարտ ու միօրինակ կեանք մը, որքան որ կարելի է երեւակայել : Աստուծոյ շուքով սրճարանը՝ տեղւոյն ժօֆեյ Բիլլսը՝ զոր ամառնալայն ժողովրդեան մեծամասնութիւնը — մարմինն անհաշկանդութեան ջերմ կողմնակիցներ — գիշերնոցով եւ քապուճով կը յաճախեն, եւ ցերեկէն ետքը Այալման՝ ուր փոքր վաճառներուն գլխաւոր ժամանցը իրարու դէմքին վրայի բիծերը համրելն է, երբ անդալական քօնիֆներու համեստ սաշարն . . . ու անոնց ընդլայնումը լիննայ :

Կեանքի այս տաղալացուցիչ հանդարտութիւնը որ կրնայ առողջ մարդ մը հիւանդացնել տամբէհինգ օրուան մէջ, կատարելապէս հակառակ ազդեցութիւն ունի չափազանց դժուարեցութենէ մը իրենց առողջական կտրուկային հաւասարակշռութիւնը կորսնցնողներուն վրայ : Մարմին ու մտքին անլիթոր հանգստին շնորհիւ՝ շուտով կը հանդարտ ամենէն փոթորկայոյղ ետթիւնը, մինչդեռ՝ միւս կողմէ բնութիւնը կ'օգտուի խաղաղ նաւահանգստի մէջ այս ապաստանումէն, փութով կատարելու իր յաւիտենական վերանորոգիչ պատճառը :

Մտային հաւասարակշռութեան կողմէ, որ եւ է կազդուրումի պէտք չունէի ես — զո՛ք այնպէս կը կարծեմ — սակայն առողջական հաւասարակշռութիւնս մեծապէս վնասուած է Քիւնցստալանի համեստութեան մը ստանդար-

զի յարձակումներէն, որոնք սուրբ մը արքայութենէն հանելու չափ հրապոյր ունէին եւ Չինաստանի պատերը տեղէն խախտելու չափ ոյժ . . . ո՛ր մնաց նուաստութեան մարդկային փորձութեանց ենթակայ եղեգնեայ կամքը :

Ամբողջ ձմեռը ամենէն անկանոն կեանքը անցուցեր էինք այս կուշտ ու կուռ աղջկան հետ, որուն ձայնէն աւելի ուսերուն զեղեցկութիւնն ու կուրծքին բարձրաւանդ պերճութիւնները հիացումի ձայնարկութիւններ կը խլէին մինչեւ կէս-գիշեր՝ Քոնքորաիա յաճախող տոններուն բերնէն, եւ որ կէս-գիշերէն ետքը պարահանդէսներն ու դարեջրատուններու մասնաւոր սենեակները կը վազվզէր, իր զեղուն զուարթութեանը յազուրդ տալու համար : Կարգ մը ապաշխարողներու նման, որոնք քունէ կը զրկեն իրենց անձը մեղքերուն լաւութեանը համար, ամբողջ ձմեռը հսկեր էինք մենք ալ դարեջրուրի դաւաթներուն շուրջը, կամ պարահանդէսներու ժողովին մէջ, շաբաթներով չառանկով արեւուն լոյսը, որուն դէմ աղջամուղջին հաճոյքները սիրողներուն անհաշտ ատելութիւնը ունէինք :

Ո՛ր մէկը ըսեմ, կամ ո՛ր մէկը խոստովանիմ այն սիրուն ամբարշտութիւններուն որոնցմով սեւաթոյր մրտանցիւք մեր հոգիները այդ երեք ամիսներուն մէջ : Մեր զգացողութեանց խօլ ընդլզումին մէջ՝ բան մը չի ձգեցինք հաճոյքի ու վայելումի պէտպիսութիւններէն, որոնք այնքան զգլխիչ էին, որքան ուժապնդ կը ցնցէին մեր զգայնատենչ էութիւնները :

Ու դարունը համեմատելով, այս ոստոսացող աստանդական թռչունը, որ մը «մնասբարով» երկառով մը ձգելով, չուեր էր զէպի Բարիզ, մինչդեռ ես — ասանձին մնալուս պէս մազերէս մինչեւ եզունգնեայ զգալով այդ ելեկտրական կեանքին առողջութեան վրայ առաջ բերած քայքայումը — անպարէր էի ինքզինքս հիւանդանոց նետել ամիսներով խօկալու համար Քոնքորաիայի համաստեփնիսը չափազանց ուսումնասիրութեանը բոլոր անպատեհութիւններուն վրայ :

* * *

Այս հիւանդութենէն վերջն է, որ իբր ապաշխարութիւն ապօրէն ընթացքիս, Եւգանի մէջ առանձնանալու դադարարը ունեցայ . կատարեալէս յաջող դադար մը որուն նմանը խիստ քիչ ունեցեր եմ կեանքիս մէջ :

Արդարեւ, ամառնալայրին օդն ու ջուրը հիանալի արագութեամբ կազդուրեցին տկարացած մարմինս : Ամբողջ ձմեռն օրուան լոյսէն զրկուած էութիւնս նոր կեանք ստացաւ արեւուն կենսաբաշխ ազդեցութեանը տակ : Հազը՝ որ մարմինս այնքան կը դնցէր՝ կեցաւ, ու ապրելու հաճոյքը սկսաւ կամաց կամաց նորէն ելեկտրականացնել ջիզերս . բան մը զոր կատարեալապէս «անցած պատմութիւն» համարելի էի հիւանդանոց մտած ատենս :

Յենցաղի ու միջավայրի փոփոխութիւնը՝ մարմնիս ոյժերուն հետ՝ չուշացաւ ազդելու նաեւ հոգեկան արամադրութեանցս վրայ : Եւգանի համեմատելու երկու ամիս ետքը՝ սկսեր էի արդէն չահագրգռուիլ աշխարհային ու աշխարհիկ գործերով, այս անցաւոր կեանքին ամբարշտիկ կապուած մահկանացուի մը ետանդով : Եւ որովհետեւ աշխարհիկ կեանքը չեմ կրցած երբեք հասկնալ առանց կնկան հրապոյրներուն, աչքերս ու սիրտս սկսած էին յանկուծութիւն (affinité) մը փնտռել այն կէս տասնեակ աղջիկներուն մէջ, որոնց զսպուած համեմատութիւնները ա՛յնքան պերճաբանօրէն կը թարգմանէին ամուրի կեանքի ձանձրոյթները՝ մեր Այազմաի գուժարումներուն :

Դրաած էք հսկառակներու ազդեցութիւնը կեանքի մէջ : Քանիներ կը ճանչնամ, որոնք անխոնջ աշխատող մը ըլլալէ ետքը — ու սաստկապէս կշտամբելէ ետքը ծուլութիւնը — ամենէն անուղղայ ծոյր դարձած են աշխատութեան յազուրդի մը հետեւանքով : Քանիներ ամենէն մեծ ընդդիմախօսները եղած են այն դադարաբաններուն զորս ջերմագին պաշտպանած էին կանխապէս : Քանիներ . . . (Շարունակեցի՛ք, կադաշեմ, հսկադրոթիւններ, միւնչեւ որ յոգնիք) :

Սիրայ մէջ մանաւանդ ամենէն անարամաբանական երեւոյթները առաջ կը բերէ հակազդեցութիւններու ընթացքը : Խարտեաչներու երկրպագուները թուխերուն կը դառնան շատ

անդամ, ու թուխերը պաշտօնները կը լքանեն զանոնք խարտեաչնեկուն վազելու համար : Բանաստեղծական թախիսթեան ու կեցեալին անմտութեան սիրահարները, բնութեան առատ պարգեւները փնտռելու կը սկսին մէկէն ի մէկ, մինչդեռ անդին ըմբշամարտիկի ձեւերով կրներէ զատուողներ, սիրազեղ ակնարկներ կ'ուզէին թռքախտաւորի նիհարութիւններ պատկերացնող արեղծ ազնիւներու :

Նորին, անձամօթին փափաղը — անքակտելի մարդկային սրտին մէջ — կը բացատրէ այս ամէնը : Որքան ալ գնահատելի ձիրք մը ըլլայ այն յամառ հաստատամտութիւնը՝ զոր «սրտի հաւատարմութիւն» կը կոչէին անցած դարերու մէջ, շատեր զգացումի եւ զգայնութեան բթացումի մը կը վերագրեն միեւնոյն սիրոյն մէջ յամառիլ ու կենալը, որ զօրեղապէս կը նմանի արդէն անսարքերութեան :

Միեւնոյն բանը եղեր էր իմ հոգիիս մէջն ալ : Բռնքորտաբնակ գեղուհիէն ետքը՝ որ երկտրական արագութեամբ մը կը հասկնար կեանքը, Եագաճըփի այս հանդարտ միջովայրին մէջ — ծուլութեան մեղկութիւններուն վարժուելու հետեւանքով թերեւս — ուշադրութիւնս զրաւեր էր կտրմիր գոյնելով, հաստ կազմուածքով, հանդարտ բնաւորութիւնով Իւսկիւտարցի աղջիկ մը՝ որ Հոռոբիկ ոչ-բանաստեղծական անուան կը համապատասխանէր :

Այս համեմատաչափ ապագայ տանտիկնութիւնը՝ չըջանաւարտ որ եւ է երկուեւ վարժարանէ մը՝ չեմ գիտեր ինչ անբացատրելի հաճոյք մը կազգէր ինծի իր հայազգէի բնականաւոր խօսակցութիւնովը : Այնքան մեծ սրքան անբնական երանութիւն մը կը զգայի նաեւ, լսելով իր սեփի ու համաձայնութեան սխալներով լեցուն ֆըրանսերէնը, որուն մէջ Վէրլէնի ոտանաւորներուն գեղեցկութիւնները կը գտնէին իմ բնեղծակ, տմբարշտացած ականջներս :

Ըսի արդէն թէ յարաբերութիւնները շատ դուրին են Եագաճըփի մէջ : Հոռոբիկին ընտանիքը ճանչցեր էի գիւղը հաստատուելէս մէկ երկու օր ետքը, եւ զայն ուշադրութեանս առարկայ ընելուս վրայ՝ մեր առօր-

եայ հանդիպումներէն օգտուելով մէկ երկու սիրային խօսք յաջողեր էի սպրդեցնել իրեն :

Օրիորդը — Եւայի յաջորդութենէն, որքան ալ indolente ըլլայ — խոստացող մեղմութեամբ լսեր էր խօսքերս : «Ի՞նչ կ'ըսէք» «Ի՞նչ կ'ընէք» ի նազանքներուն մէջ հաճոյք էր վերջապէս ինք ալ պատասխանել սիրային խիզախութիւններու, ինչ որ հիմա բարբառող շահեկան կ'ընծայէր ինծի Եագաճըփի կեանքը, զոր կատարելապէս անտանելի զրտեր էի առջի ատենները :

Սակայն, առաջին օրէն իսկ տեսակ տեսակ դժուարութիւններ սկսեր էին պատկերներ նորածին սիրահարութիւնը :

Նախ՝ Հոռոբիկի ընտանիքը կը ընտելէր զիւրին, ճամբէ հեռու, նեղ փողոցներէն մէկուն մէջ, ուր կարելի չէր դեղերիլ անցուղարձի որ եւ է պատրուակով : Եագաճըփի զեղացիները վարժուած չեն բարեացակամ հանդիսատեսներ ըլլալու սիրային յարաբերութիւններու՝ որոնք այնքան կը քաջալերուին Բերայի փիլիսոփայական միջավայրերուն մէջ : Տիպիկ այն աներկբայելի հաւանականութիւնը — որ շարժումներուն անուշադիր ամէն սիրահարի կը սպասէ հոն . . . որքան մաքուր ալ ըլլան իր դիտաւորութիւնները — վախի բաւական պատճառ մըն էր, որպէս զսանձէի զգացումներուս եռանդը :

Յետոյ՝ Հոռոբիկի մայրն ու քոյրը բացարձակ կերպով զօրկ էին կեանքի այն լայն ըմբռնումէն որ կը թողարէ երբեմն ընտանիքի մեծերը՝ սիրահարութիւնները քաջալերելոյն իսկ եթէ ելլի մը յանգելու օր եւ է հաւանականութիւն չընծային անոնք :

Կատարեալ կերբերոսներ տոնք, աչքերին չորս կը բանային ամէն անգամ որ Հոռոբիկ ու ես կը փոխանակէինք աչքերու եւ սրտի այն անձայն խօսակցութիւնը, որ Մարքոնիէն զարեւով առաջ յաջողած է լուծել անթիւ հեռագրութեան կնճառտ խնդիրը :

* * *

Ինչպէ՞ս բացատրել ամբողջ այն երջանկութիւնը զոր կը զգայի հիմա այս պարզունակ աղջկան դժուարութիւններով լեցուն սիրտի մէջ : Բռնքորտաբնակ գեղուհիէն ետքը՝ որ իր զօրեղ նկարագրովը ամբողջապէս տիրել

էր կամբիւս վրայ, ինծի համար նորութիւն մըն էր այս վախկոտ Հայուհին, որ կը կարմրէր ամէնէն անմեղ սիրականակին հանդէպ, եւ որուն միակ դերը աշխարհի վրայ բոլորովին կրտսերական արարած մը ըլլալ կը թուէր:

Ձմեռուան երկարական կեանքէն ետքը ամառի այս դանդաղ սիրահարութիւնը, որուն մէջ օրեր կը տեւէր ամէն նոր քայլ՝ հակադրեցութեան ամբողջ հաճոյքը ունէր: Դժուարութիւններու յաղթելու առիթները՝ որոնք կը ներկայանային օրէ օր, սիրուհւոյս զգացումներուն երկարունակ տարրալուծումը, զոր այնքան շահեկան կը գտնէի հիմա, անծանօթին հրապարակ ունէին ինծի համար:

Ու այս նորօրինակ սիրահարութեան մէջ, ամբողջ հաճոյք մըն էր նաեւ նոր նոր վարպետութիւններ մտածել Հոռոտիկին Տիկին մօրը ու Տիկին քրոջը աշխուրջ հսկողութեանը դէմ, որ ծնողական կատարեալ բռնութեան մը ձեւը կ'աւելնէր հիմա:

Այս հսկողութենէն ճարահատած՝ Հոռոտիկ եւ ես թղթակցութիւն մը սկսէր էինք, ճամբուն վրայ քարի մը տակ ձգուած նամակներով, որոնց մէջ իրարու կը բացատրէինք — ես՝ դպրոցական տղու մը եթերացումով, Հոռոտիկ՝ ուղղադրութեան սխալներու զարմանահրաշ պէսպիսութիւնով — մեր զգացումները, ու իրարու կ'իմացնէինք ժամադրաւորները ուր քանի մը վայրկեան պիտի կարենայինք առանձին մնալ մեր փոխադարձ զգացմանց սիրազեղ գրաւակները փոխանակելու համար:

Ու այնքան մեծ էր մեր զգուշութիւնը այս թղթակցութեան մէջ ալ, որ — ամէն հաւանականութեան հանդէպ — մեր ստորագրութիւններն իսկ փոխէր էինք երկու շատ սովորական անուններու. ես «Թորոս Նպիւփանեան»ի, եւ անիկա «Նզիսարեթ Փուփուլեան»ի:

Ու կը շարունակէինք իրարու գրել, օրէ օր աւելցնելով խանդակաթ զգացումներու արտայայտութիւնը, եւ «հրեշտակ» կոչելով զինքը, մինչդեռ անիկա «հոգի» կը գրէր ինծի: Ու երջանկութիւնս կ'աւելնար ամէն անգամ որ անխորձ աղջկան գաղափար մը

կը գտնէի իր նամակներուն մէջ. գաղափար զոր ծիծաղելի պիտի համարէի անշուշտ եթէ քանի մը ամիս առաջ Քոնքորտիւրնակ գեղուհին արտայայտած ըլլար:

* * *

Այս սիրագրութեան ամենէն շահեկան պահուն էր, որ խոջնդոտ մը ծագեցաւ յանկարծ մեր յարաբերութեանց արդէն դժուարածայտ ճամբուն վրայ:

Կարապետ Կալոսեան անունով յիսնամեայ գաւառացի մը Պոլիս եկեր էր՝ մայրաքաղաքին դարգացեալ օրիորդներէն իրեն կենակից գտնելու առաջադրութիւնով. ու չեմ գիտեր ինչպէս եղեր էր, աղջիկ կարգելու մարմաջէն բռնուած տանտիկիներէն մէկը Հոռոտիկը յիշելով, տրամադրելի օրիորդներու շարքին մէջ սարքեր էր, օգտուելով ապրանքը նպաստաւոր պայմաններու մէջ ներկայացնելու առիթներէն մէկէն, որ աղջիկսնս կը կոչուէր հին խաւարեալներու լեզուով:

Ու Կալոսեանը՝ հրապարուած Հոռոտիկի զարգացած աղջկան ձեւերէն, ինչպէս անոր մեծափարթամ կազմին խոստումներէն — զորս այնքան կը գնահատեն միշտ նրկականին հաւատքը ունեցող գաւառացիները — երկբորդ օրն իսկ իմ «հրեշտակ»իս ձեռքը խնդրեր էր, զինքը աշխարհիս ամենէն երջանիկ արարածը ընելու երդումներով:

Դիտե՞ր էք այն դժգոհութիւնը զոր լրագրական թերթիներ կ'արգացողներ կ'արտայայտեն երբ անխուսափելի «շարունակելի»ն կուգայ պատմութեան շարքը կտրել, դրժողութեան ամենէն հետաքրքրական կետերուն: Միեւնոյնը եղաւ ինծի ալ Կալոսեանի ներկայանալովը մեր սիրալէպին ճիշդ այն պահուն, ուր՝ Հոռոտիկը օրէ օր աւելի տըկարացած, իր սիրոյն աւելի չօշափելի հաւասարները կ'ընծայէր ինծի:

Աղջիկահօս օրէն սկսեալ մեր յարաբերութիւնները բոլորովին նոր ձեւ մը ստացան: Ընտանիքին հսկողութիւնը կրկնուած էր տեղի չտալու համար որ չար լեզուները գործը աւելնէ. ու Հոռոտիկ ինքն ալ — եսնափի աղջիկներու յատկանիշը եղող կեանքի դարձնական ըմբռնումով մը — սկսեւ էր մաքին մէջ զուգակշռել ինծի հետ ունեցած յարա-

բերութեանը արժէքը , Պ. Կակոսեանի հա-
րըստութեանը խոստացած վայելքի կեան-
քին հետ :

Սակայն ես ալ տեղ մը կը գրաւէի վեր-
ջագէս իր սրտին մէջ եւ ակներեւ էր որ
հաշիւի առջեւ խոնարհելէն առաջ , սրտին
հակումները տատամսում կը պատճառէին
իրեն :

Հակառակ մօրն ու քրոջը յարաճուն հըս-
կողութեանը , Հոռոփիկի տաթմ գտաւ վերջա-
պէս զիս տեսնելու , երկու ներհակ աղղե-
ցութիւններու իր սրտին մէջ առաջ բերած
բուռն պայքարը պատմելու համար :

— Եթէ դուն զիս ուղես , ըսաւ , վազ
կ'անցնիմ Կակոսեանէն ալ , իր ոսկիներէն
ալ : Քանի որ զիս սրտանց սիրելի այնքան
անգամ ըսիր , ձեռնդ տես ինզորէ որպէս զի ես
ալ քեզ նախընտրելու կարենամ խոստովանիլ :
Եթէ ասկիա չընես , ինչպէ՞ս կ'ընամ մերժել
առաջարկութիւն մը զոր աշխարհ արարած
նպատաւսը կը գտնէ :

Վա՛յ անմտութեանս . . . երբեք չէի
մտածած խնդիրը այս տեսակէտէն քննել ,
Ամուսնա՛նալ . աւասիկ բան մը որ չէր
համապատասխաներ նիւթական վիճակիս ,
ինչպէս հոգեկան արամադրութեանցս ալ :
Երջանկայիշտակ Գօղմայէն ու Դամիանոսէն
քիչ տարբերութիւն ունէի նիւթականի տե-
սակէտով , մինչդեռ հոգեկանապէս , եթէ Հո-
ռոփիկին մտել հրապոյրներուն արբշիւ սիրա-
հարն էի , երբեք մտքէս չէի անցուցեր յաւի-
տենապէս կապուիլ այս աղջկան :

Լաւագոյն ընթացքը իր առաջարկութեանը
հանդէպ , ճշմարտութիւնը խոստովանիլն էր ,
անշուշտ սիրահարի արժանի յուսահատական
բացադանջութիւններով համոմելով զայն :

— Հրե՛շտակս , ըսի իրեն , որչա՛փ երջա-
նիկ պիտի ըլլայի եթէ նիւթական վիճակս
ներէր ոսկի սանդուղ մը դնել ոտքիդ տակ ,
որպէսզի անոր վրայ բարձրանայի դեղեց-
կութեանդ բոլոր հրապոյրովը փրկելու խոցա-
ցած սրտիս : Ուրքա՛ն երջանիկ պիտի ըլլայի
եթէ ազամանդէ վանդակ մը կարենայի կաղ-
մել անոր մէջ բնակեցնելու սրտիս սիրածը՝
զայն աշխարհի աչքէն փախցնելու համար .
սակայն , աւա՛ղ , դժխեմ ճակագիրը (ո՛ւ ձեռ-

քովս ուժգին հարուած մը տուի ճակիքիս)
միայն հոգեկան վայելումներով դահանգու
դատապարտած է դիչի մարդը : Դուն զըժ-
բաղի պիտի ըլլայիր , ո՛վ Հոռոփիկ , եթէ
Տիէքսի տաղերը միայն ունենայիր առտուան
նախաճաշիդ եւ Անաթոլ Ծռանսէն հատուած
մը՝ ցերեկուան կերակուրիդ համար : Բուռն
սէրս չներեր որ զքեզ ընկեր ընդունիմ այս
զրկանքի կեանքին որ ամսուան մը մէջ կըր-
նայ հալեցնել բնութեան լիառատ շնորհնե-
լովը օժտուած գեղեցկութիւնդ (երկվայրկեան
մը դադար . որո՞եւ ետքը ձեռքի հոռեւական
շարժում մը) դնա՛ ուրիմն , ո՛վ գեղեցիկ
աղջիկ , դնա՛ անոր որ կրնայ սալ քեզի ար-
ժանի եղող ոսկի շրջանակը . ու ձգէ՛ որ ասի
ետքը կեանքի մէջ իմ բաժինս յուսահատու-
թիւնը ըլլայ :

. . . Հակառակ քնարերգութենէ խորշե-
լուս , հակառակ կեանքի ամէն պարագայ
ուրախ կողմէն ընդունելու տրամադրութեանս ,
ինքզինքս չկրցայ վայրկեան մը արդիւն ,
սակայն , սրտի սեղմումէ մը՝ այս պարզունակ
աղջկան հանդէպ , որ եկեր էր նիւթական
առաւելութիւնները մերժել իր անմիտ զարմ-
թեղադրութեանը հետեւելու համար :

* * *

Վայրկեան մը միայն , չեմ ուրանար :
Հոռոփիկէն զատուելէս պահ մը ետքը արեւ-
ութիւնը տեղի տուած էր արդէն մտածու-
միմ , ու որքան կը խորհէի՝ այնքան աւելի
համոզում կը դոյսցնէի թէ նորօրինակ հով-
ուերգութիւնը զոր սկսեր էինք շնորհաղիւ
օրիորդին հետ , «ի խորոց սրտի» ողբերով
պիտի լիննար անմիտեպ՝ եթէ երբեք հաւանէի
իր առաջարկութեանը :

Եւ , յետոյ , դիւրին սէրերու վարժուած
սկեպարիկի յաւակնութիւններս եկան օրօրե-
լու զիս ապագայ յոյսերու երազներով . կէս-
մրարի մը մէջ Հոռոփիկը տեսայ՝ Կակոսեա-
նէն աաղակաացած՝ որ իր յիշատակներուն կը
դիմէր աւելի «գարգաղեալ» սիրոյ մը տենչով
եւ ինքնահաւան ունայնամտութիւնս յաջո-
ղեցաւ վերջապէս զիս համոզելու որ մեր յա-
րաբերութիւնները կրնային չարունակութիւն
մը ունենալ , երբ «հրեշտակ» Տիկին Կա-
կոսեան կոչուէր : — Բէ՛հ , կ'ըսէի ինքնիրե-

նրա, եթէ Հոռոփիկը զիս իրաւցնէ կը սիրէ, ինչո՞ւ սրբողի միմիայն անոր համար որ անունս չկրցայ տալ իրեն . . . պարտաւ զըրպանի մը հետ : Ընդհակառակը, մերժումըս որ նիւթական փայլուն վիճակ մը կ'ապահովէ իրեն, ծառայութիւն մըն է զոր պիտի գնահատէ երբ կեանքի փորձառութիւնը ունենայ . հիմայ որ կեանքի նիւթական մասը մտածելու պէտքը երբեք չպիտի ունենայ, «գգացում»ի մասը կրնայ մշակել . . . ինծի հետ :

Ու գրիչս առի նորէն՝ ամենէն հրատապ Pouletin դրեւու «հրեշտակ»իս . համակ բանաստեղծութիւն նամակ մը, որուն մէջ անհուն յուսահատութիւնս կը բացատրէի իրեն հետ չկարենալ ամուսնանալուս համար . . . պարզապէս որովհետեւ քանի մը հազար ոսկիի վարկ մը չէի յաջողած ունենալ Քրէտի Լիօնէի մէջ :

Մեր սովորութեանը համեմատ՝ նամակը ուղղուած էր Եղիսաբեթ Փռփռալեանի եւ ստորագրուած Թորոս Եպիփանեան :

Նամակը գրի այն քարին տակ, որ նամակատուփի պաշտօնը կը կատարէր մեր թըղթակցութեանը մէջ, վստահապէս յուսալով այսքան անկեղծութեամբ յայտնած զգացումներուս արժանի պատասխան մը ստանալ :

Երկրորդ օրը՝ պատրանքով լեցուած՝ գացի փնտռել պատասխանը : Աւա՛ղ, նամակս մնացել էր ինչպէս որ գրեւ էի հոն . Հոռոփիկ ոչ իսկ հաճել էր այցելել մեր սիրային թըղթատունը :

Եւ նոյն օրն իսկ լուր կ'առնէի որ ամբողջ ընտանիքը որոշեր էր Իւսկիւտար երթալ հարսնիքի պատրաստութիւններուն համար :

Միակ միջոցը որուն կրնայի գեռ գիմել, մեկնելէն առաջ գոնէ անգամ մը տեսնել էր Հոռոփիկս : Յաջողեցայ առիթը գտնել վերջապէս եւ բանաստեղծի շնորհով յայտնեցի բոլոր վիշտը զոր կը զգայի իրմէ զրկուելովս :

Հոռոփիկ հազիւ հաճեցաւ հեղնող ժպտով մը պատասխանել .

— Անիկա երազ մըն էր որ մարեցաւ, բաւ, խօսեցէք ձեր զգացումներուն վրայ, եթէ հաւատարմով ըլլայ :

Այս պատասխանը գտնուած տեղս քամեց

զիս . ա՛յսքան չհասկնալ կեանքը . . . մականունի խնդիր մը համարիլ սէրը, մինչդեռ թերեւս ճշմարիտ գոհողութիւն մը կընէի ես չընդունելով զրկանքներու կեանքի մը դատապարտել զինքը : Հապա այն հեղնող ակնարկը՝ որուն մէջ ա՛յսքան կանուխէն կատարեալ անտարբերութիւն գրեւ էր ապագայ տիկին Կակոսեանը . ճամբուած սիրահարի այս դերը — ա՛հէն ծաղրելի դերը աշխարհի վրայ — երբեք դորձիս չէր դար : Պէտք էր որ բան մը ընէի ես ալ զգացումներուս փոխուած ըլլալը հասկցնելու համար . պէտք էր այս սիրոյն ինծի համար թաղուած ըլլալը հասկցնէի որպէս զի ողբ ու կոծի մէջ չենթադրէր զիս, իր մերժումէն զգացուած :

Ուշագրութիւն ըլէ՞ր էք որ ամենէն ծախսող դադափարները ընդհանրապէս ամենէն կարեւոր պարագաներուն կ'ունենանք : Չեմ գիտեր ի՞նչ ապուշ տրամաբանութիւն մը մղեց զիս պաշտօնական հոնգամանք մը տալ Հոռոփիկին ունեցած սիրոյս մահուանը : Հիմա մտածելով աղէկ մը չեմ կրնար բացատրել դադափարներու այն գլխովին սխալ հոսանքը, որ այսքան տխմար բան մը ընել կը թելադրէր ինծի . նախանձորղի չարութիւն մը, որուն մէջ քիչ մը տղու կատակ կը խառնուէր թերեւս . . . :

Հոռոփիկի ամուսնութեան օրը երկուսս կի զրկեցի Մեծ-Նոր-Խան երկու տարբեր անձի ձեռքով . . . եւ յաջորդ օրը ապուշ գոհունակութեամբ մը կը կարգայի Պոլսոյ ամբողջ հայ մամուլին մէջ .

«Օրիորդ Եպիստարթ Փռփռալեանի մահուան առթիւ՝ փոխան ծաղկեփունջի մէկ օսմանեան ոսկի նուիրած է Մեծ. Թորոս էֆ. Եպիփանեան :»

Ու այս ազդին կը հեռուէր ուրիշ մը որուն մէջ այս անգամ ես կը նուիրէի, իմ բուն անունովս, ուրիշ ոսկի մը, միշտ «փոխան ծաղկեփունջ»ի, «Ագնուափայլ Օրիորդ Հոռոփիկ Կարապետեանի ընդ Ագնուաշուք Կակոսեան էֆէնտիի բարեբաւարի հարսանեաց առթիւ :»

Սրամատութիւն մը կարծէր էի այս ապուշ հրատարակութիւնը . գիտէի որ մեր Պոլսոյ այնքան ոսկեղինիկ լրագրութեան հաւատարիմ

ընթերցող մըն էր Հոռոփիկը . եւ այս կրկին հրատարակութիւնով ուղեր էի իրեն հասկըցնել թէ վերջին խօսքերուն վրայ ա՛լ առանց որ եւ է վշտի կը համակերպէի իր նոր վիճակին :

* * *

Ամուսնանալէն չարաթ մը ետքը Կակոսեան իր երկիրը տարեր էր կիներ , եւ ժամանակին ազդեցութիւնովը մեծափարթամ Հոռոփիկը իրաւցնէ լուսահոգի Եղիսարեթ Փուփուփան մը եղեր էր սրախ մէջ . նորագոյն հանդիպումներ մօթթարեր էին զիս , այն կիսատ մնացած հովուերգութեան պատճառած վիշտէն :

Անցեալ ձմեռ Բերայի մէջ շատ խօսուեցաւ այրի տիկին Կակոսեանի մը վրայ , որուն ոսկիներու կարեւոր քանակութեան մը հետ հասունցած պտուղի հիւթեղ գեղեցկութիւն մը բերած ըլլալը կը պատմուէր զաւառական չեմ գիտեր ո՛ր քաղաքէն :

Տիկին Կակոսեան . . . Հոռոփիկն էր անշուշտ , որ քանի մը տարուան մէջ լաւագոյն աշխարհ մը զրկելէ ետքը զարգացած չրջանաւարտի սիրահար գաւառացին , Պօլիս վերադարձեր էր իր այրիական վիշտերուն արժանաւոր միթիթարանքը գտնելու համար :

Տարածայնութիւնները արդէն խոստմնալից համբաւ մը չիներ էին տիկինին : Այրիութեան չնորած ապատութիւնէն նախապաշարուեմէ զուրկ անկեղծութեամբ մը օգտուելու վրայ ըլլալը կը պատմուէր ականջէ տկանջ :

Երբեք պատահո՞ր է ձեզ որ մոռցուած , թաղուած զգացումի մը մէկէն ի մէկ արթննալը զգաք ձեր սրտին մէջ , Ներուած թշնամութիւն մը , օրինակի համար , որ մէկէն ի մէկ ջերմ վրէժանդրութեան մը ձեւին տակ կը զարթնու . լքուած բարեկամութիւն մը՝ որ տարիներ ետքը՝ մաերմութեան աստիճանով կը վերածնի . կամ սէր մը՝ շատոնց անյիշատակ՝ զոր անկարեւոր միջադէպ մը մինչեւ արքայութիւն կ'արծարծէ :

Հոռոփիկը օր մը պատահաբար Բերայի մեծ ճամբուն վրայ լաց կառքի մը մէջ նըշմարելու բաւեց , որպէսզի իր չնորհներուն անսարանք՝ ինծի ամէն յանդգնութիւն ներշնչելու չափ crescendo բարձրացնէ զգացումներու ձայնաշարը :

Խնչպէս փթթեր էին ըտուր այն տերձութիւնները , որոնք իրենց նորածիլ վիճակին մէջ իսկ , այնքան զօրեղ ազդեցութիւն մը ունեցեր էին վրաս : Խնչ բերնի ջրերը վազնող հասութիւն . Խնչ գեղուն բարեձեւութիւններ :

Ետգաճըզի պզտիկ կատակներէ նեղուող աղջիկը չէր հիմա Հոռոփիկը , Հակառակ գաւառի մէջ անցուած ըլլալուն , ամուսնութեան տարիները՝ իր գեղեցկութիւններուն պէս՝ հասունցիչ ազդեցութիւն մը ունեցիւ էին նաեւ իր սկզբունքներուն վրայ . իր հագուստ ու կապուսակն , շորժուսներուն եւ նայն իսկ դիտելու ձեւին մէջ չեմ գիտեր ինչ բան առաջին ակնարկին իսկ կը մասնէր աշխարհը հասկցած pratique կինը , որ ուրաղաոյտ ճամբաները չօրէքր նպատակին երթալու համար :

Որքա՞ն մեծ երջանկութիւն մը պիտի ըլլար հին հովուերգութիւնը շարունակել — հիմա նիւթապաշտ վէպի մը ձեւին տակ — այս աղւոր այրիին հետ : Հոռոփիկի սիրտն խոստացած վայելումներուն գաղափարը միայն կը բաւէր ամբողջ մարմինս երեկտրականացնելու , անպարագրելի զգացուածութիւններու յոյսերով :

Ամենէն կարճ ճամբան՝ պատմութիւնը շարունակելն էր ձիւղ այն կէտէն ուր ձգիւ էինք զայն . զլիսու շատ բարեկամական շարժումը արդէն , որով Հոռոփիկ փոխանակիւ էր մեր հանդիպումի վայրկեանին իմ քիչ մը տատամսոտ բարեւ , բաւական քաջակրական մըն էր ինծի . երկրորդ օրն իսկ աճապարեցի իր տունը երթալ զարպաս սկսելու համար :

Հոռոփիկ՝ առանձին իր սենեակին մէջ՝ շատ սիրալիկ ընդունելութիւն մը ըրաւ . կատարեալ բարեկամական ընդունելութիւն մը , որուն մէջ իր գործը զիացող կնկան անգործութիւնը , սակայն , վրդովիչ բան մը ունէր ինծի պէս սիրային առաջադրութիւններ ունեցող այցելուի մը համար : Իր տանը մէջ կատարեալ տան-տիկին մըն էր անկեղծ ու առողջութիւնս , զրական աշխատութիւններս հարցնելու ձեւը բաւեց որպէսզի դիրողանցապէս վարդաւ մէկուն հետ գործ ունենալս հասկնամ :

Քաղաքագլխութիւն համարեցի միջոց մը շարունակել խօսակցութիւնը միեւնոյն ձեւին մէջ, աստիճանադար հասնելու համար նպատակիս :

Ու կէս ժամ խօսակցութենէ ետքը, որու միջոցին անկեղծ մտերմութեան մը յանդեր էին մեր երկուստեք տրամադրութիւնները, յարմար դատեցի ա'լ խօսքը մեր սիրոյն վրայ բերել փոխաբերութիւնով մը հին սիրային յիշատակները կենդանացնելով մէկէն ի մէկ :

— Սիրիլի տիկին, ըսի, հաւտացէք որ Թորոս Եպիփանեան միեւնոյն զգացումները կը կրէ միշտ իր սրտին մէջ, ու իր երջանկութիւնը անհուն է Եղիսարեթ Փռփուռեանի հանդիպելովը :

Հաղու նշմարելի այլալուծ մը, զոր անմիջապէս զսպեց, երկվայրկեան մը լուսութեան դատադարոնց Հոռփիկը : Կայծակի արագութեամբ տրեց իր ջիղերուն ու բարձրաձայն քրքիչով մըն էր որ պատասխանեց իմ փոխաբերութեան, շատ լուրջ եղանակով մը դնելով սակայն իր խօսքերուն մէջ :

— Ա՛հ, Եղիսարեթ Փռփուռեան, ըսաւ, Թորոս Եպիփանեան շատ լաւ գիտէ անոր մեռած ըլլալը, քանի որ «փոխան ծաղկեփունջ»ին չէր մոռցեր անոր թաղման ատենը : Ուրախ պիտի ըլլամ միշտ զձեզ հոս իւր Կալոնեան հարսնիքին խնդակցող անկեղծ բարեկամը ընդունելով : մի'շտ այս տիպոսով սակայն :

«Միշտ»ին վրայ խոշոր շեշտ մը կար, կատարեալապէս դէպի :

... Անկէ ի վեր որ եւ է զօրութիւն չկրցաւ տիպոսի փոփոխութիւն մը առաջ բերել մեր յարաբերութիւններուն մէջ : Հոռփիկ կը դատադարոնէ զիս՝ վաղամտեիկ Կակոսեանի յիշատակին կատարեալ յարգանքի մը : մինչդեռ ինչ անդին երջանիկներ կ'աւելցնէ աշխարհի վրայ ուրիշներէ ընդունելով սրտաբախ մոխրութեանները, զորս այնքան քիչ պիտի ըլլայի եւ չտայլելով :

Այդ «փոխան ծաղկեփունջ»ին աշխարհի մէջ ուրիշ որ եւ է՝ բան այդ քանի մը սող հրատարակութեան չափ մնասած չէ ինծի : ու ըսել որ սրամտութիւնս ցուցնել կարծեր էի . . . :

Գ.Ա.Ն.Ի.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Թատերական վերջին եղանակին՝ երբ Բազուի եւ Թիֆլիսի թատերասէրները որ եւ է կազմակերպութեամբ հայ դերասանական խումբին օգնելու չի յաջողեցան, կը կարծուէր որ հասարակութիւնը պիտի զրկուի բեմէն : Բայց իրողութիւնը հակառակը ցոյց տուաւ : մեր բեմը զրկուեցաւ հասարակութեան օգնութենէն, մինչդեռ հասարակութիւնը վայելեց իր բեմը : Այս հանգամանքը, ինքնին շատ մտիթարական, ի հարկէ արդիւնք է մեր արուեստագէտներու սիրոյն դէպի իրենց ընտրած առարկալը, եւ ապա այն ոյժին զոր անոնք կը զգան իրենց հետ ունենալով բեմի հողին՝ Տիկին Սիրանոյշը :

Այսպէս ահա, հայ դերասանական խումբը չի դադրեցաւ ներկայացումներ տալէ նախ Թիֆլիս եւ յետոյ Բազու, ընդամենը քսանը մէկ թատերախաղեր (հեղինակութիւն եւ թարգմանութիւն) որոնցմէ մէկ քանիին վրայ գրեցին արդէն Պոլսոյ ազգ. թերթերը : Այդ պիւններուն մէջ յիշատակելի են մասնաւորապէս Պարոնեանի Մեծապարսիւ մուրացկանները եւ Շիրվանդատէի Եղիմէն :

Խումբը փետրվ. 26ին սկսեցաւ սկսելու իր թատերական tournée՝ դէպի Նոր Նախիջևան, Մոսկուա, Ասդրաբան եւ Շուշի, մինչեւ օգոստոս :

Տ Թիֆլիսի թատերական մարմինը իր պաշտօնական վաւերացումը ստացած ըլլալով, առաջիկայ ձմեռն համար նախապատրաստութեան սկսուած է հոն արդէն : Իսկ Բազուցիները, քիչ մը աւելի կարուկ ճամբով, 2-3 հօգի միացած (Պ, Պ. Խաթիսեանց, Լ. Ղուլեանց եւ Ար. Կրասիլնիկեանց) արդէն պայմանաւորուեցան դերասաններու մեծ եւ լաւագոյն մասին հետ, յառաջիկայ սեպտեմբերին Բազու ներկայացման սկսելու համար : Վերեւ յիշուած թատերական շրջուն խումբը կազմուած է հետեւեալ դերասան եւ դերասանուհիներէն .

Տիկնայք՝ Սիրանոյշ, Մայսուրեանց, Փառանձեմ. Օրիորդք՝ Բնար, Նուարդ. եւ Պ. Պ.

Արեւեան , Պետրոսեան , Աւետեան , Ստեփանեան , Ալիխանեան , Զարիֆեան , Մելիք-Յովսէփեանց , Աղայեանց , Բիրոյեանց , Դարեանց :

§ Տիկին Սիրանոյշ Բարեկենդանի վերջին օրերուն Գանձակ գնաց երկու ներկայացում ալ այնտեղ տալու իր խումբի մէկ մասին հետ : Գանձակեցիները շատ արժանաւոր ընդունելութիւն-ըբեր են տաղանդաւոր դերասանուհիին , բաղմամբիւ նուէր եւ ծաղկեպսակներ տալով անոր . յետոյ փառաւոր ընթրիք սարքելով ի պատիւ Տիկին Սիրանոյշին եւ ամբողջ խումբին , երկամուղիի կայարանը առաջնորդել են՝ յատկապէս վարձած վազինով ձամբարդել տալու համար զանոնք :

Մեր բեմի ծանութեան կեդրոնը՝ դարձել է իրաւամբ Տիկին Սիրանոյշ իր տաղանդով եւ իր յարասեւ զարգացմամբ , անդու աշխատութեամբ . տարիները իր մէջ միշտ բան մը կ'աւելցնեն եւ կարծես ոչինչ կը պակսեցնեն . միշտ եռանդուն է , միշտ վառ , փայլելով եւ փայլեցնելով այն բեմը որուն նուիրուած է համակ :

§ Զի մոռնամ ըսել թէ Թիֆլիս մնացած հայ դերասաններն ալ ձեռնթափ չեն նստած . եւ վերջացող եղանակին ոչ նուազ ներկայացումներ տուին՝ իրենց զուլա ունենալով արիկին Մելիքեանը եւ Պ. Ա. Յարութիւնեանը : Յանկալի եւ հաւանական է որ առաւելագոյն Կովկասեան կեանքի խաղերու մէջ այնքան յաջողակ այդ երկու արդիօցներն ալ յառաջիկայ սէզօնին Բաղու ի բեմին վրայ երևան :

Բաղու, 2 Մարտ 1902

Մ. Պ.

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ՛ Լոյս շաբաթաթերթը , որ անպայման կերպով դադարման դատադարաւած էր երկու շաբաթի վեր , այսօրունքն կը վերականգնուի՝ արտօնութեամբ Տղադրական Տեսչութեան :

“ԿԱՐԱՊԵՆ ԵՐԳԸ”

Կ. ՈՍԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱՅԻՆ

Դուս որ անգութ Պատրանքն սիրտդ բնկնուն՝
Մայրական սուրբ սեռն երգեցիր հոգեգմայ,
Որուն յառած մընացիր մինչ հուսկ ողջոյն՝
Միակն անկեղծ, միակն անքիծ, անայլայ,
Անդրշիրմի յիշատակիդ խրակարոյր՝
Օն, քանի՞ն քաղցր է ուշդիլ բոյ մը բառ.
Ըզմայլանքի, երբ ո՛վ Ոսկեան, անհրապոյր
Լանջքերնուս տակ ըզգանք ենեզ սըր մ'անբարբառ .
Ցաւի վրսեմ ծաղիկ, ծ սիրտ կուտական,
Չոր քաղցեցին կեանքի դիքիջ գարնան մեջ,
Բեզ պէս ճրքան անձուկն ունի, ան, որքան՝
Մեր սիրտն անոյշ երգանքի մը անվերջ:
Վա՛ն, դուս չեղար բընաւ հեզնոտ, ըսկեպիկ,
Ու տարիք ցաւը օրբի խորշերն ամայի,
Վիճերուն դեմ, ծովափին մօտ, մութ, մեկնիկ,
Սիրտդ գեղուն երազներով՝ գարնային:

* *

Ո՞վ չէ սիրած քափառումներն իրիկուան,
Խորճրդապաւ ուղիներուն քովն ի վեր,
Երբ թիթեռնիկ-յիշատակներ խօսական
Տեղացած են իր սրբաին մեջ կիսաւեր . . .
Հեծկրկունքին տակ մահաբոյր, սև աշտան
Տեսած էի քեզ այդ գիշեր, կը լիշեմ.
Մեծիբերտարի պարտեզն եր լնու մենաատան
Հոգիներուն՝ լըբուած, մըռալ ու դբխեմ:
Հարազատիդ՝ Գիրգորին հետ զըլխաճակ՝
Երբ մենաւոր լապտերն՝ հնւքա՝ կը փայլէր,
Կը դիւեէր՝ նրատած անձաւն ծառին տակ,
Տըրտում ունային, անձանօթին բառուերներ . . .
Օն, միքէ լուռ, անհուն երան մ'անաւոր
Կը ծածանէր աջքերուդ դեմ, հակաիդ շուրջ,
Արդեօք վերջին յոյսի խըլեմի մըն եր որ
Տըրիկ կուտար լանջքդ ու հոգիդ անշշունջ . . .
Եւ երբ հիմայ կոյս հոգիներ սրգաւոր
Դու ջինջ, անկեղծ ձայնիդ ու ջերմ երգերուդ
Արձագանգով կըստիտիւնն եւ, օր մ'երբոր
Դըժգոն սիրով ես ալ անցնիմ անյագուրդ,
Կարապիլ երգդ, ո՛ր Կարապետ, ծն պիտի
Հեծէ, տուէ իմ ալ գանկիս տակ մըքին . . .
Դուս ճանջցար սեքն անգուգական մօր սրբոյ՝
Որ հիւսիսայն եղաւ հոգւոյդ անդունդին,

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒԲԵԱՅ

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար Եօղուշու, Թիւ 27

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱՆԷ



Վաճառքի



Արուեստագիտական վերջին հատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպայի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենաշատը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուսայի պարզ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանք դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց ամանութիւնը։ Փախարդներուն՝ քաթալօղ ձրի կը զրկուի։ Մեծ քանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱՔ ԵՒ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻՔ վաճառատուները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմուշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով։

ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիէն Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շարփօտօնի
ՊՈՍՊԱՅ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.
ԱՂԵՔԱՄԱՆԻՐԻԱ.—ՊՊ. Գալփաեան
ԳԱՀԻՒԷ.—Պ. Է. Ռոզաբայ.
ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք.
ՎԱՌԵԱ.—Պ. Կեռօն Մարտիր.
ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՒՌՆԻԱ.—Պ. Հայրիսի Վառնիկ.
ՍԵՂԱՆԻԿ.—Պ. Տիմօ Ֆիքնանտեղ.
ԻՒՍԿԻԿ.—Պ. Մ. Քափուանօ.
ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքիլ Շիֆֆեր.
ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբայրք.
ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան.
ՍԵՐԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեմառուբեան.
ՌՈՏՈՍԹՈ.—Պ. Յակոբ Բոօվաւայ



ՌՈՍՏԻՍ — ROSSIA



Ա. ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ
երաշխաւորութեան գումար
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

34,775,642 ֆրանք
121,765,383
164,172,000

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսաւան հին տեղը
Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՒՐՄԻՆՋ ԲԷՆՏՈՐ ՌԷՐԱԷՆ

Ծանօթ պանդոկապետ Պ. Եէրասիմոս Բուրուքլիսի Գառնդիւղի մէջ վարած երկու մեծ օթելները

MODA PALACE HOTEL (Մօտա)

ԵՒ

HOTEL BELLE-VUE (Ֆանարաբի)

Գարնանամուտի մօտաւորութեան առթիւ նոր ու լաւագոյն կազմակերպութիւններ տտացած են, յաճախորդները ուրիշ տարիներէ աւելի դո՛ւ ընելու համար ամէն կերպով Այս երկու պանդոկներն ալ բոլորովին ընտանեկան հանգամանք մը ունին, հանգստաւէտութեան, մաքրութեան եւ լաւ սպասարկութեան բոլոր պայմանները միացնելով:

ՄՕՏԱ-ԲԱՆԱՍ օթելը բաց է ամբողջ տարին:

Պէլ-Վիի օթելը բաց է Ապրիլէն մինչ Նոյեմբերի վերջը: «Պէլ-Վի» օթելը ունի ընդարձակ պարտէզ, ուր նուագաժողովին ալ կը կատարուի ամէն օր, եւ գարեջրատուն: Ամէն տնոնք, ընտանիքները մասնաւորապէս, որոնք կը փափագին գարնան եւ ամառուան եղանակը անցընել այդ ծովահայեաց ու օգտուն վայրերուն, — Մօտաի կամ Ֆանարաբիի, — օթելներուն մէջ, պէտք է փութան հիմակուց դիմել Պ. Եէրասիմոս Բուրուքլիսի:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

Չեռփի, ուռփի եւ ձեռփի ու ուռփի միանգամայն մեքենաներ կը գոցուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Բնակրութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր իսան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամպէլին կայարանին Դիմաց:

ՊԱԼԱՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Գէյազիտ:

Դասերը եւ նորագոյնիւնք ձրի:

Կասաբեայ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՆԱԽԱՐԱՐՈՒՄ

ՄԱՍՆԱԿԱՆ ՍԻՆԿԵՐ